2003, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (156)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուսումնական տարվա վերաբացման առիթով Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում կրթության ասպարեզի սպասավորներին եւ ուսումնական հաստատությունների սաներին:*

*Մեր ժողովուրդը դարերով ապրել է գիտելիքի ու դպրության հանդեպ սերը հոգում, պահպանել է այն հակառակ ամեն փորձության եւ ավանդել է մեզ իբրեւ թանկ ժառանգություն: Այսօր Մեր աղոթքն է, որ նոր հույսերով սկսվող ուսումնական տարին լեցուն լինի ուսումնատենչ ոգով, չնվազող ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ, որպեսզի գիտելիքն ու ճանաչողությունը, հոգեւոր բարոյական արժեքները միշտ մնան մեր կյանքի անբաժան մասը ու պտուղներ տան առատ ու բարի:*

*Կրթության բնագավառի սիրելի նվիրյալներ եւ սիրասուն սաներ, մաղթում ենք, որ հոգով ու մտքով զորացած անցնեք դեպի իմացության լույս առաջնորդող ձեր միասնական ճանապարհը, եւ թող Բարձրյալ Տերը օրհնի ձեր ջանքերը ու բարի ընթացքը՝ հանուն մեր Հայրենիքի վաղվա նոր օրվա եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հավերժ շինության ու պայծառության:*

*Թող ամենաառատ շնորհներն Աստծո ու սերն անսահման լինեն ձեզ հետ ու բոլորի. ամեն:*

### Պատվոգիր՝ Մախիմ Հակոբյանին



Օգոստոսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի անունից, պատվոգիր հանձնեց Քաջարանի Պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մախիմ Հակոբյանին:

Հանդիսավոր արարողության ընթացքում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը ներկայացրեց «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի առաքելությունը: Նա հիմնավորապես անդրադարձավ Մատենադարանի աշխատանքներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ցուցաբերած աջակցությանը:

Բարձր գնահատելով բարերարի ազգասեր եւ եկեղեցանպաստ գործունեությունը՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքում նշեց. *«Մեզ համար հոգեւոր տաճարի խորհուրդ ունի Մատենադարանը, ուր պահվում են մեր հայրերի աղոթքներով ստեղծված մասյանքներն ու հոգեւոր արժեքները: ...Մատենադարանը հարստությունն է ազգի: Յուրաքանչյուր ներդրում Մատենադարանի առաքելության մեջ, նրա գիտական աշխատանքների զարգացման գործում, նշանակում է մասնակցություն ունենալ ազգային կյանքի կերտմանը»:*

Տիար Հակոբյանը դեռեւս 2002 թ. հոկտեմբերին իր նվիրական եկեղեցասեր գործունեության համար արժանացել էր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարձրագույն «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշանի:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, ինչպես նաեւ Մայր Աթոռի միաբանության եւ Մատենադարանի պաշտոնեության ներկայացուցիչները:

### Հայ Եկեղեցին տոնեց Սբ. Աստվածածնի Վերափոխումը

Օգոստոսի 17-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց Սբ. Աստվածածնի Վերափոխման տոնը: Աստվածամոր ննջումը եւ Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի խոստմամբ երկինք վերափոխումը հիշատակող այս տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց սբ. Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Սբ. Պատարագի ավարտին Սբ. Տրդատի բաց խորանում կատարվեց Խաղողօրհնության կարգ:

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ սենատորների եւ կոնգրեսականների աշխատակազմի պատվիրակությանը

Օգոստոսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի Հայկական Համագումարի հրավերով Հայաստան ժամանած ԱՄՆ սենատորների եւ կոնգրեսականների աշխատակազմի պատվիրակությանը: Պատվիրակությանն ուղեկցում էին ԱՀՀ-ի տարածաշրջանային տնօրեն Արփի Վարդանյանը եւ ԱՀՀ-ի կոնգրեսական կապերի տնօրեն Ռոբ Մոշերը:



Ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նրանց, եւ ի դեմս նրանց, բոլոր այն անձանց, ովքեր իրենց զորակցությունն են բերում հայ ժողովրդին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի մասին: Անդրադառնալով արցախյան հարցին՝ Նորին Սրբությունը նշեց. *«Մենք հավատում ենք, որ ղարաբաղյան խնդիրը եւս իր արդար լուծումը պիտի գտնի, եւ մեր ժողովրդի զավակները պիտի ապրեն խաղաղության մեջ՝ կերտելով իրենց կյանքն իրենց հայրենի հողում»:*

Վեհափառ Հայրապետը մասնավորապես անդրադարձավ նաեւ քրիստոնեական դաստիարակության, եկեղեցականների պատրաստության, եկեղեցաշինության, սոցիալական սպասավորության ոլորտներում առկա խնդիրներին:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց պատվիրակության անդամների հարցերին:

### Օծվեց Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի նորակառույց Ս. Թուխ Մանուկ եկեղեցին



Օգոստոսի 23-ին Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում, ձեռամբ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի, օծվեց Ս. Թուխ Մանուկ նորակառույց եկեղեցին:

Ս. Թուխ Մանուկ եկեղեցին կառուցվել է Ժորա եւ Մխիթար Գրիգորյանների անմիջական նախաձեռնությամբ եւ տեղի ժողովրդի ջանքերով:

Առաքել սրբազանն իր խորին շնորհակալությունը հայտնեց եկեղեցու բարերարներին՝ վստահ լինելով, որ այս եկեղեցին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միշտ պիտի լինեն նրանց սրտերում եւ հոգիներում:

Օծման արարողությանը մասնակցում էին Գեղարքունիքյաց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանը, Կոտայքի թեմի հոգեւորականներ, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Ս. Թուխ Մանուկ եկեղեցու օծման ավարտին նորակառույց եկեղեցու բակում տեղի ունեցավ մեծ տոնախմբություն:

### Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց ճանապարհորդ Ֆյոդոր Կոնյուխովին

Օգոստոսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց աշխարհահռչակ ռուս ճանապարհորդ Ֆյոդոր Կոնյուխովին՝ Հայաստանում Ռուսաստանի հայերի միության ներկայացուցիչ Գագիկ Աբրահամյանի, Ռ. Ճրագյանի, Հ. Ղուշչյանի, Վ. Գալստյանի եւ Տատյանա Կալաշնիկովայի ուղեկցությամբ:

Ողջունելով Կոնյուխովի այցելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նրան՝ բարի եւ ազնիվ առաքելության համար:

Տեղեկացնելով Նորին Սրբությանը Արարատ լեռը բարձրանալու իր առաջիկա ծրագրի մասին՝ նա հայցեց Հայոց Հայրապետի օրհնությունը:

Հանդիպման ավարտին Ֆյոդոր Կոնյուխովն այցելեց նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանները:

# ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ուխտի պատարագ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Օգոստոսի 24-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածինն ընդունեց հերթական ուխտավորներին: Մայր տաճարի օծման 1700-ամյակի առիթով Սբ. Էջմիածին էին ժամանել մի խումբ գերմանահայեր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արք. Բեքճյանի առաջնորդությամբ:



Նորին Սրբության անունից ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Հայր սուրբը մասնավորապես նշեց, որ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը ինչպես անցյալում, այնպես էլ այսօր շարունակում է ուղղորդել հայության ընթացքը դեպի հավերժություն եւ փրկություն:

Ապա ուխտատարի ժողովրդին դիմեց պատարագիչ սրբազան հայրը: Նա անդրադարձավ Սբ. Էջմիածնի խորհրդին՝ հորդորելով հավատարիմ մնալ Մայր եկեղեցուն եւ լուսավորչահավատ Սբ. Աթոռին:

*«Եկել ենք մեկ անգամ եւս մեր ուխտը նորոգելու Աստծո եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սուրբ Սեղանի առաջ՝ զորանալու հոգեպես՝ աղոթելով, որպեսզի Ամենակալ Տերը մեր հավատքը հաստատ եւ անսասան պահի, ինչպես նաեւ Հայաստանյայց Առաքելական մեր եկեղեցին ու մեր նորանկախ պետությունը»*,- ասաց սրբազան հայրը:

Հավարտ Սբ. Պատարագի Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր օրհնություններն ու բարեմաղթանքները փոխանցեց գերմանահայերին, որոնց հոգեւոր հովիվն է եղել շուրջ 30 տարի առաջ:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներին

Օգոստոսի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներին՝ առաջնորդությամբ Բալթիմորի Արքեպիսկոպոս Կարդինալ Ուիլիամ Քիլերի: Պատվիրակությանն ուղեկցում էին ԱՄՆ-ի հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արք. Պարսամյանը եւ նույն թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Վիգեն եպս. Այքազյանը:

Հանդիպման սկզբում Խաժակ արք. Պարսամյանը հանգամանալից ներկայացրեց պատվիրակության անդամներին՝ անդրադառնալով երկու քույր եկեղեցիների միջեւ առկա եղբայրական սերտ հարաբերություններին:

Գարեգին Բ Կաթողիկոսը բարի գալուստ մաղթեց Մայր տաճարի օծման 1700-ամյակի առթիվ Հայաստան ժամանած Կաթոլիկ եկեղեցու պատվիրակության անդամներին՝ անդրադառնալով Հայ եկեղեցու առաջ ծառացած խնդիրներին եւ առկա միջեկեղեցական հարաբերություններին: «Ուրախ ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ողջունելու Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների պատվիրակությանը՝ մեկ անգամ եւս հաստատելով այն ջերմ հարաբերությունները, որոնք առկա են Հայ Առաքելական եկեղեցու եւ Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու միջեւ: 2001-ին՝ հոբելյանական տարում, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ն այցելեց Հայաստան եւ բնակություն հաստատեց կաթողիկոսարանում, ուր մենք աղոթքի եւ խոկումի բազում պահեր ունեցանք իրար հետ: Եվ այդ այցը նոր էջ բացեց մեր երկու եկեղեցիների փոխհարաբերությունների մեջ»,- իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպմանը ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, Անդրկովկասում Վատիկանի դեսպան եւ պապական նվիրակ Կլաուդիո արք. Գուջջերոտին եւ Մայր Աթոռի միաբաններ:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց պատվիրակության անդամների հարցերին:

Այցի շրջանակում պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի եւ ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի հետ: Այցելեցին Մատենադարան, Ծիծեռնակաբերդ, Երեւանի Ս. Սարգիս եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներ, ինչպես նաեւ Գեղարդավանք, Խոր Վիրապ եւ Գյումրի: Իսկ կիրակի օրը Մայր տաճարում մասնակցեցին Ս. Պատարագի արարողությանը:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի մշակույթի եւ կրոնի գործերի նախարար Լոռենցիու Թըրնազեին

Օգոստոսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի մշակույթի եւ կրոնի գործերի նախարար Լոռենցիու Թըրնազեին: Պատվարժան հյուրին ուղեկցում էր Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Դիրայր արք. Մարդիկյանը:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Ռումինիա կատարած իր հայրապետական այցին եւ այն ջերմ հարաբերություններին, որոնք առկա են Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղափառ եկեղեցիների միջեւ:

**«Մենք անչափ ուրախ ենք, որ մեր եղբայրական կապերը Ռումինիայի ժողովրդի հետ եկեղեցական եւ պետական մակարդակների վրա շարունակում են սերտանալ եւ ամրանալ»**,- նշեց Նորին Սրբությունը:

Ի պատասխան Նորին Սրբության՝ Ռումինիայի մշակույթի եւ կրոնի գործերի նախարարը խորին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Նա անդրադարձավ նաեւ Ռումինիայում ապրող հայ համայնքի պատմական նշանակությանը ռումին ժողովրդի կյանքում:

*Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տեղեկատվական համակարգ*

# ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋԸ

*Սկիզբը՝ թիվ 13-15*

Դավրիժեցին գրում է. «Այլեւ ուրիշ մարդիկ ասացին, թե Դավիթն այս խոսքն էլ է ասել շահի ներկայությամբ. *«Եթե Լուսավորչի Աջը եւ Էջմիածնի քարերը չգնան Սպահան, անհնար է, որ հայ ազգը Սպահանում մնա»*: Շահ Աբասն այս առիթը բաց չի թողնում: Կարգադրում է Ամիրգունա խանի որդի Թահմազղուլի բեկին, որը փոխարինել էր հորը Երեւանի կառավարչի պաշտոնում, ձերբակալել Մելքիսեդեկ աթոռակցին, տանջանքների ենթարկել, ապա նրան՝ կապկպված, Լուսավորչի Աջի հետ մեկտեղ, հասցնել իրեն: Վերջինս անմիջապես ձերբակալում է Մելքիսեդեկին, կտտանքների ենթարկելով՝ պահանջում Լուսավորչի Աջը: Կաթողիկոսը ստիպված Թահմազղուլի բեկին է հանձնում Լուսավորչի Աջը, նրա հետ նաեւ մի Ավետարան՝ թանկարժեք ոսկեզօծ կազմով, եւ մի արծաթյա խաչ: Այս բոլորը գերված Մելքիսեդեկի հետ ուղարկում է շահ Աբասին: Պատմիչը գրում է. *«Շահը մեկ առ մեկ վերցնում էր ձեռքը եւ նայում՝ [սկզբում] Ավետարանը, ապա խաչը եւ հետո Լուսավորչի Աջը: Եվ հարցնում էր, թե իրոք այս է. ապա համբուրելով Աջը՝ վայր դրեց: Իսկ Մելքիսեդեկին շահը հաստատ մտադրվել էր սպանել, բայց Ամիրգունա խանը լավ էր ընդունում Մելքիսեդեկին»*, եւ վերջինիս միջնորդությամբ էլ կենդանի թողնվեց: Բայց *«ինչպես երեւում է, այստեղ է լինելու կատարումը շահի բազմաժամանակյա բաղձանքների, որովհետեւ նա, որ երկար ժամանակ խորհում, մտորում էր, թե ինչ հնարքով քանդի Սուրբ Էջմիածինը ու խափանի այնտեղ գտնվող կաթողիկոսությունը եւ Սպահանում շինի Էջմիածին, այնտեղ նշանակի կաթողիկոսություն: Արդ՝ ահա գտավ*



*պատճառը՝ ըստ իրենց (հայերի) հոժար կամքի»* (էջ 170): Շահը Մելքիսեդեկին վերադարձնում է Երեւան՝ հետեւյալ բովանդակությամբ մի նամակով. *«Իմացիր, Թահմազղուլի, ահա քեզ մոտ ենք վերադարձնում Մելքիսեդեկ կաթողիկոսին, Լուսավորչի Աջը եւ Ավետարանն ու խաչը: Նաեւ կգնաս Էջմիածին եւ Էջմիածնի նշանավոր քարերը կքանդես, կհանես տեղերից եւ Էջմիածնի այդ քանդված քարերը, Լուսավորչի Աջը, Ավետարանն ու խաչը եւ Մելքիսեդեկին եւ սրանց ամենքին կուղարկես գնան Սպահան քաղաքը»* (էջ 170):

Թահմազղուլի խանը շահին հաճոյանալու համար Էջմիածնի քարերն ուղարկելուց առաջ կամեցավ նախ Լուսավորչի Աջը ուղարկել, որովհետեւ մտածել էր, որ մինչեւ քարերը քանդեն, բեռը պատրաստեն ու տեղափոխեն՝ շատ ժամանակ կանցնի: Այդ իսկ պատճառով զինվորներ է առանձնացնում եւ Էջմիածնից Հովհաննես անունով մի քահանա դնում նրանց հետ՝ Աջը սպասավորելու համար: Սրանք, Լուսավորչի Աջը, ոսկեկազմ Ավետարանը եւ արծաթյա խաչն առնելով, Երեւանից դուրս են գալիս եւ գնում հասնում Սպահան քաղաք:

Սպահանի ողջ ժողովուրդը խաչվառով, Ավետարանով, խնկերով, մոմերով, երգով ու երաժշտությամբ դիմավորում է վերոհիշյալ սրբությունները ու մեծ պատիվներով տանում հասցնում խոջա Սաֆարի տուն, ուր պահվում էին մինչ այդ այնտեղ բերված Հռիփսիմե կույսի մասունքները եւ այլ սրբություններ: *«Արդ,-* ավելացնում է Դավրիժեցին,- *մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջն այսպիսի պատճառով եւ ձեւով գնաց Սպահան»*: Սրան հետեւում է Էջմիածնի նշանավոր քարերի քանդելու, տեղից հանելու գործը: Այս առիթով պատմիչը գրում է. *«Դրանք հետեւյալներն են՝ Սուրբ Սեղանը, որի վրա Սուրբ Պատարագն էր մատուցվում, այս Սեղանի սյունը, Քրիստոսի իջման տեղի քարը, ավազանը, մի քար բեմի հարավային կողմի աստիճանից, մի քար բեմի հյուսիսային կողմի աստիճանից, որովհետեւ ավագ բեմի աստիճանները երկու կողմից են՝ հյուսիսից ու հարավից, չորս քար եկեղեցու չորս անկյունից, դռների կողմից երկու քարե մոմակալ՝ աշտանակ, որ մեռոնաբերների մեծ մոմերը դնեն մեջը եւ վառեն, երեք ուրիշ քարեր՝ բեմի սալարկի քարերից՝ ընդամենը տասնհինգ քար»* (էջ 171):

Այս քարերը հանելուց հետո պատրաստում են համապատասխան սայլեր, գոմեշներ լծած հասցնում են Սպահան, բայց քաղաք չեն մտնում, այլ քաղաքադարբասի մոտ գտնվող մահմեդական Բաթուն գյուղն են տանում: Քարերին ընդառաջ է ելնում Սպահանի ողջ հայ ժողովուրդը՝ խաչով, Ավետարանով, խունկերով, մոմերով ու երաժշտությամբ, ուղեկցում դրանց, մինչեւ որ դրվում են Բաթուն գյուղի գմբեթավոր մի շինության մեջ: Մի քանի տարի այստեղ մնալուց հետո, մահմեդական բնակչության խնդրանքով, շահի կարգադրությամբ քարերը տեղափոխում են Ջուղայեցիների մոտ ու տեղավորում Խոջենց եկեղեցում, որի մասին մեզ հաղորդում է Առաքել պատմիչը՝ գրելով. *«Երբ այս քարերը հանվեցին Էջմիածնից եւ ճամփու դրվեցին Սպահան գնալու, մեր թվականության 1063 (= 1614)-ն էր: Եվ երբ հասավ Սպահան, տարին փոխվել էր, մտել 1064 (= 1615)-ը: Եվ այս տարին մենք եկանք Սպահան, քարերը մեր աչքերով տեսանք, հաշվեցինք, ապա գրեցինք: ...Արդ՝ քարերի տանելու թվականը գտանք եւ գրեցինք, իսկ Լուսավորչի Աջի ու Մելքիսեդեկ կաթողիկոսի տանելու [թվականը] չգտանք, որի պատճառով չգրեցինք»* (էջ 172):

Այսպիսով, պատմիչի հետագա շարադրանքից պարզվում է, որ շահ Աբասի երկարատեւ գահակալման տարիներին Լուսավորչի Աջը մնում է Սպահանում: Այդ ընթացքում մահանում են ինչպես Դավիթ կաթողիկոսը, այնպես եւ Մելքիսեդեկ աթոռակիցը: Վերջինիս վրա մինչ այդ շահը (կենդանի թողնելու համար) դրել էր 100 թուման տուգանք՝ իր գործած «մեղքերի» համար, որն այդպես էլ չկարողացավ վճարել մինչեւ իր մահը: Հետեւաբար այդ տուգանքն ընկավ Էջմիածնի Մայր Աթոռի վրա: Պատմիչի խոսքերով. *«Սա եղավ ծանր բեռ եւ տաժանելի լուծ, անխզելի շղթա Սուրբ Աթոռ Էջմիածնի վրա զուր ու անտեղի, իսկ հայոց ամբողջ ազգին [պատեցին] անմխիթար սուգ, անփարատելի տրտմություն՝ թե եկեղեցականներին, թե աշխարհականներին»* (էջ 178):

Մելքիսեդեկին փոխարինեց Սահակ աթոռակիցը, որը նույնպես չկարողացավ վճարել Էջմիածնի պարտքը, ստիպված փախավ թուրքերի տիրապետության տակ գտնվող հայերի մոտ: Այդ ընթացքում մահանում է նաեւ շահ Աբասը, որին հաջորդում է նրա թոռը՝ Շահսեֆին: Նոր թագավորը ջահել էր, իսկ նրա նախարարները եւ իշխանները քրիստոնյա հայերի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ունեին: Խոջա Նազարը բոլորից պատվավորն էր: Վերջինս նամակով դիմում է Էջմիածնում գտնվող Մովսես վարդապետին, որ շտապի Սպահան՝ արքայի պալատ, որտեղ միջոցներ գտնեն՝ վերանայելու համար Մայր տաճարի հարյուր թուման պարտքը:

Սպահան եկած Մովսես վարդապետը, խոջա Նազարի միջնորդությամբ, բավականին դրամ ծախսելով՝ որպես կաշառք, հսկայական ջանքեր թափելով, կարողանում է վերացնել 100 թուման տուգանքը, որի վերաբերյալ Շահսեֆին Մովսեսին հրամանի թուղթ է տալիս: Միաժամանակ տեղի քրիստոնյա ժողովրդի խնդրանքով շահը Մովսես վարդապետին կաթողիկոսության հրաման ու թուղթ է տալիս: *«Ապա հայոց ողջ ազգը... միաբանվեց գրությամբ ու խոսքով, Մովսես վարդապետին օծեցին կաթողիկոս եւ նստեցրին Էջմիածնի Սուրբ Աթոռին»*,- գրում է պատմիչը (էջ 191): Այս դեպքերը տեղի ունեցան 1629 թվի հունվարի 13-ին: Մովսես կաթողիկոսը գահակալում է ընդամենը երեք ու կես տարի եւ իր մահկանացուն կնքում 1632 թ. մայիսի 14-ին:

Մովսես կաթողիկոսին հաջորդում է Փիլիպոս կաթողիկոսը՝ հայ հոգեւորականության, ժողովրդի եւ Շահսեֆիի համատեղ համաձայնությամբ՝ գահակալելով 1633-1655 թթ.: Վերջինիս անվան հետ է կապվում Գրիգոր Լուսավորչի Աջը Սպահանից ետ բերելու պատմությունը:

*Շարունակելի*

***Իգիթ ՂԱՐԻԲՅԱՆ***

***Հնագիտ. դոկտոր, պրոֆեսոր***

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Գ ՇԻՆԱՐԱՐ ՏԱՅԵՑԻ

## (641-661)

*Սկիզբը՝ թիվ 15*

Պատասխան թղթում նշվում էր, որ անգամ Պարսից թագավորներ Կավատը եւ Խոսրովը կրոնական հարցերում հայերին նեղություններ չեն պատճառել: Ավելին՝ ընդգծվում էր, որ Խոսրովի վճռով Պարսկաստանի հպատակ բոլոր քրիստոնյաները պետք է ընդունեին հայերի դավանանքը: Հետեւաբար, ժողովականների կարծիքով, քրիստոնյա կայսրը դրան չպետք է հակառակվի, եւ առիթը չկորցնելով՝ գովեստի խոսքեր էին ուղղում նրա հասցեին: Բերվում են վկայություններ Ավետարանից, առաքյալների թղթերից՝ ապացուցելու համար, որ Սբ. Գիրքը Քրիստոսի երկու բնություն չի տեսնում: Այդ տեսակետը նրանք հիմնավորում են նաեւ առաջին առաքելական հայրերի ասույթներով, Նիկիայի որոշումներով եւ նշանավոր հայրապետների գրվածքներով: Ժողովը պարզորոշ հայտարարում էր, որ հայոց դավանությունը նույնն է, ինչ Լուսավորչի ժամանակներում էր: Ամբողջությամբ մեջ էր բերում Հայոց եկեղեցու հանգանակը, որն անվանում են Նիկիայի ժողովի սյունհոդոսական (սինոդի որոշումների) ձայն: Այն, ինչպես հայտնի է, Նիկիայից Հայաստան էր բերել Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակես եպիսկոպոսը: Պատասխան թղթում ասվում է, որ սուրբ ու ճշմարիտ են Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի ժողովների որոշումները, իսկ Քաղկեդոնինը՝ ոչ: Հազիվ թե ժողովի որոշումները գոհացնեին կայսեր պատվիրակ Դավիթ Բագավանցուն, որը ոչնչի չհասնելով՝ ետ վերադարձավ, չնայած աղբյուրներն այդ մասին լռում են: Սակայն ժողովի պատասխանը, այնուամենայնիվ, չուղարկվեց կայսրին, եւ ըստ երեւույթին, կաթողիկոսն ու կայսեր պատվիրակը հույներին չգրգռելու համար որոշ բաներ հարմարեցրել էին: Սակայն կայսրության կողմից էլ նոր հարցումներ ու պահանջներ չեղան, քանի որ արաբական արշավանքներն ամբողջությամբ կլանել էին արքունիքի ուշադրությունը:

Պարսիկ մի մոլեռանդի կողմից սպանված Օմարին 644 թվին փոխարինել էր 80-ամյա Օսմանը, որի իշխանության շրջանում խալիֆայությունը սկսել էր ակտիվորեն ծավալվել դեպի հյուսիս, արեւմուտք եւ արեւելք: Արաբները տիրացել էին Հյուսիսային Աֆրիկային, նվաճել Իսպանիան, հաղթականորեն շարժվել դեպի Փոքր Ասիա եւ նախկին Պարսից տիրության խորքերը: Հայերի համար արդեն իրական էր դարձել երկրի նվաճման վտանգը, սակայն բյուզանդացիները, որոնց գերիշխանության տակ էր Հայաստանը, ոչ միայն էական քայլեր չէին ձեռնարկում արաբների առաջընթացը կասեցնելու գործում, այլեւ զբաղված էին հայերին նեղելով, հարստահարելով եւ բռնությամբ քաղկեդոնիկ դարձնելու ջանքերով: Ստեղծված կացությունը պառակտեց հայ հասարակությունը, որի մի հատվածը հակվում էր դեպի կայսրություն, իսկ մյուսը փորձում լեզու գտնել հանդես եկած այդ նոր ու թարմ ուժի հետ: Հայ-բյուզանդական մերձեցումը ցավագին էին ընդունում աշխարհակալական ձգտումներ ունեցող արաբները, որոնց հարելը, մի տեսակ, փրկավորական էր քրիստոնյա հայերի մեծ մասի համար: Սակայն բյուզանդացիներն իրենց անմտածված ու անհեռանկար քաղաքականության միջոցով աստիճանաբար ուժեղացրին արաբների հետ լեզու գտնելու կողմնակիցների բանակը: Հոգեւորականությունը, ի դեմս կաթողիկոս Ներսես Գ-ի, կրոնական հանգամանքից ելնելով, մեծ մասամբ հակված էր դեպի Բյուզանդիան, իսկ նախարարները, փորձելով ապահովել երկրի անվտանգությունը, պատրաստ էին համաձայնության գալ արաբների հետ, սակայն քրիստոնեությունը պահպանելու պայմանով: Թեոդորոս Ռշտունին, արաբների 650 թ. արշավանքից հետո գլխավորելով երկրորդ թեւը, բանակցությունների մեջ մտավ Ասորիքի կուսակալ Մուավիա զորավարի հետ, որն էլ 652 թ. պայմանագիր կնքեց՝ բավականին նպաստավոր պայմաններով: Հայերն ընդունում էին արաբների գերիշխանությունը եւ հեռանում բյուզանդացիներից: Նրանք երեք տարով ազատվում էին հարկերից, իսկ այնուհետեւ պարտավորվում վճարել այնքան, որքան կամենան: Արաբները պարտավորվում էին իրենց միջոցներով պահել հայկական 15 հազարանոց այրուձին, այսինքն՝ նախկին տանուտիրական գնդին հավասար ռազմական ուժեր եւ ճանաչել հայերի իրավունքը՝ ազատորեն դավանելու քրիստոնեությունը: Հայաստանում արաբ իշխանավորներ չպետք է լինեին, ամրոցներում արաբական կայազորներ չպետք է հաստատվեին, իսկ անհրաժեշտության դեպքում, օրինակ՝ եթե Հայաստանի վրա հարձակում լիներ, խալիֆայությունը պետք է ռազմական օգնություն ցույց տար: Չնայած այդ ուժն անվանապես չէր հիշատակվում, սակայն հասկացվում էր, որ պայմանագիրը ստորագրող կողմերն ի նկատի են ունեցել բյուզանդացիներին: Չնայած Բյուզանդիայի հետ դաշնակցելու կողմնակիցները ստիպված էին հաշտվել այդ կացության հետ, սակայն հայ-արաբական պայմանագիրը եկեղեցականների կողմից դիտվեց որպես մահվան հետ ուխտ եւ դժոխքի հետ դաշինք:



Հայ-արաբական պայմանագիրը սառը ցնցուղի ազդեցություն ունեցավ բյուզանդական արքունիքի վրա: Կայսրը սկզբում փորձեց հայերին խնդրանքներով իր կողմը գրավել՝ առաջարկելով հայ քաղաքական գործիչներին գալ Կոստանդնուպոլիս կամ էլ նրանց հետ հանդիպել Կարինում՝ որոշելու համար իրենց անելիքները: Սակայն հայ նախարարները եւ նրանց առաջնորդ Թեոդորոս Ռշտունին, որ մինչեւ կոկորդը կուշտ էին բյուզանդացիների նենգ ու երկդիմի քաղաքականությունից, նման հանդիպում կազմակերպելու ոչ մի ցանկություն չարտահայտեցին: Իր հերթին ալեկոծվում էր նաեւ բյուզանդական հասարակությունը, որի զինվորական շրջանները կայսրից պարզապես պահանջում էին պատժել հայերին, ուստի երիտասարդ՝ քսանչորսամյա Կոստանդին կայսրը մեծ բանակով արշավեց դեպի Հայաստան: Պահը հարմար էր ընտրված, քանի որ մեծահասակ Օսման խալիֆը գրեթե չէր վերահսկում իրադրությունը. շատ անվանի հին զորավարներ անարգվել էին, իսկ նորերի հանդես գալը միայն ներքին հուզումների պատճառ էր դարձել: Արաբական ռազմական ուժը կորցրել էր իր նախկին թափը, եւ երբ արաբները չկարողացան կանգնեցնել բյուզանդական զորքերի մուտքը Դերջան, երկրում տրամադրությունները սկսեցին փոխվել: Հայ-բյուզանդական մերձեցման կողմնակիցները, որ ստիպողաբար էին միացել Թեոդորոս Ռշտունուն, այժմ գլուխ բարձրացրին: Կայսեր կողմն անցան Ծոփքի, Սպերի, Բագրատունյաց, Մանանաղի, Դարանաղի, Եկեղյաց, Կարնի, Տայոց, Բասենի, Վանանդի, Շիրակի, Խորխոռունյաց, Մամիկոնեից, Առավեղյանց, Առանյանց, Վարաժնունյաց, Գնթունյաց եւ Սպանդունյաց նախարարները, որոնք մեծապես խրախուսվում ու քաջալերվում էին հայոց կաթողիկոսի եւ եպիսկոպոսների կողմից:

Սակայն Թեոդորոս Ռշտունին իր կողմնակից 40-ի չափ նախարարներով, որոնց մեջ էի Թեոդորոս ու Գրիգոր Վահեւունիները, Վարազներսեհ Դաշտկարը եւ շատ ուրիշներ, այդ թվում՝ Մարդպետականի, Ռշտունիքի, Վրաց ու Աղվանից նախկին մարզպանությունները եւ Սյունիքի իշխանները, հավատարիմ մնացին հայ-արաբական պայմանագրին: Կայսրը ստորադասությունից հանեց Թեոդորոս Ռշտունուն եւ նշանակեց Մուշեղ Մամիկոնյանին եւ փորձեց ռազմական ուժով ծնկի բերել ընդդիմադիր նախարարներին: Բյուզանդական զորքերը սկսեցին ավերել երկիրը եւ ձերբակալել նախարարներից նրանց, ում հնարավոր էր: Թեոդորոս Ռշտունին քաշվեց Աղթամար կղզի, որը նրա կողմից խիստ ամրացվել էր: Ներսես Գ-ի եւ Մուշեղ սպարապետի՝ խնդրանքով հալածանքները մի պահ դադարեցին, եւ կայսրը 20 հազարանոց բանակով ժամանեց Դվին ու իջեւանեց կաթողիկոսարանում:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ԵՐԱՆԻ

## *արդարության համար հալածվողներին*



*Սկիզբը՝ թիվ 10-15*

### Պարզ մեկնություններ պատանիների համար

Մենք արդեն գիտենք, թե ինչ է արդարությունը: Արդարությունը ե՛ւ Աստծո կամքն ու պատվիրաններն են, ե՛ւ Աստծո կամքի եւ պատվիրանների համաձայն ապրվող կյանքը՝ արդար կյանքը: Եվ գիտենք, որ ովքեր մեծ ձգտում ունեն Աստծո պատվիրանները, Աստծո կամքը սովորելու, իմանալու եւ դրա համաձայն ապրելու, այսինքն՝ արդարության քաղցն ու ծարավն ունեն, արժանի են երանության: Բայց երանության արժանի են նաեւ նրանք, ովքեր այդ կյանքով ապրելիս դժվարությունների առաջ չեն ընկրկում, մարդկանցից ու նրանց հարուցած խոչընդոտներից, նույնիսկ սպառնալիքներից ու հալածանքներից չեն վախենում եւ Աստծուն ու Նրա պատվիրաններին հավատարիմ են մնում: Նույնիսկ մահվան գնով: Ահա այսպիսի մարդիկ, որոնց համար ամենակարեւորն Աստծուն եւ ոչ թե մարդկանց հաճելի լինելն է, Աստծուն չբարկացնելը, չտրտմեցնելը, որեւէ կերպ Նրա դեմ չմեղանչելը, արժանի են մեծ երանության: Այդ երանությունը Երկնքի արքայությունն է. *«Երանի արդարության համար հալածվողներին, որովհետեւ նրանցն է Երկնքի արքայությունը»*: Սրան անմիջապես հետեւող վերջին «երանին» սրա շարունակությունն է եւ պարզապես լրացնում է սրանում հայտնված միտքը. *«Երանի ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ Իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար բան ստելով ասեն: Ցնծացե՛ք եւ ուրա՛խ եղեք, որովհետեւ ձեր վարձը շատ է երկնքում. որովհետեւ այսպես հալածեցին նաեւ ձեզանից առաջ եղած մարգարեներին»*:

Երբեմն մարդ կանգնում է դժվար կացության առաջ. նա պետք է ընտրություն կատարի Աստծո պատվիրանի, արդարության, ճշմարտության եւ Աստծո պատվիրանին հակասող որեւէ վատ արարքի միջեւ: Օրինակ՝ նա աշխատում է մի հիմնարկում, եւ նրա տնօրենը պահանջում է մի անօրեն, վատ, մեղավոր գործ կատարել: Եթե աշխատողը չկատարի իրենից պահանջվածը, տնօրենը նրան կհեռացնի աշխատանքից, եւ նա կմնա անգործ կամ պատժի կենթարկվի: Իսկ եթե կատարի իրենից պահանջվող վատ արարքը, կպահպանի իր աշխատատեղը, սակայն Աստծո դեմ մեղք գործած կլինի, արած կլինի այն, ինչ Աստված չի սիրում: Ինչպե՞ս վարվել: Չէ՞ որ ոչ ոք չի կամենում իր աշխատանքը կորցնել կամ հրամանը չկատարելու պատճառով պատժվել: Հաճախ մարդիկ վախից նախընտրում են հնազանդվել մարդուն եւ կատարել նրա վատ պահանջը, քան հնազանդվել Աստծուն:

Սակայն պատահում են նաեւ աստվածասեր ազնիվ մարդիկ, ովքեր ոչ մի գնով, նույնիսկ գիտենալով, որ անձնական վնաս են կրելու, չեն համաձայնում անիրավություն, անօրինություն, չարագործություն կատարել: Նրանք կարող են վնասներ կրել մարդկանցից, ընկնել նեղության մեջ, սակայն ուրախ են, որ Աստծո դեմ չմեղանչեցին: Եվ այսպիսի մարդկանց Աստված սիրում է եւ օրհնության արժանացնում: Աստված երբեք ու երբեք չի թողնում, Իր օգնությունից չի զրկում Իրեն սիրողին: Իսկ եթե վերջինս նեղություններ ու վշտեր է կրում, ապա Աստված թույլ է տալիս, որ այդ ամենն Իր հավատարիմ ծառայի, զինվորի, որդու հետ կատարվի, որպեսզի նա իր համբերությամբ արժանանա շատ մեծ պարգեւների: Աստված այդ պարգեւները կարող է տալ թե՛ այս կյանքում եւ թե՛ մանավանդ հավիտենական կյանքում, երբ մարդը վերջնականապես դառնա Երկնքի արքայության կամ Ողջերի երկրի քաղաքացին:

Հաճախ մարդիկ այնքան շատ են սիրում Աստծուն, որ պատրաստ են իրենց ամբողջ կյանքն էլ հալածվել, տանջվել, զրպարտվել, նախատվել, միայն թե չմեղանչեն Աստծո դեմ: Որովհետեւ նրանք շատ մեծ հավատ ունեն եւ գիտեն, թե իրենց ինչ է սպասում: Նրանք գիտեն, որ միայն այս կարճատեւ կյանքը չէ, որ տրված է մարդուն: Կա հավիտենական սքանչելի, անպատմելի կյանք, որը Հիսուսը պարգեւելու է նրանց, ովքեր այս կյանքում սիրում են Իրեն եւ կատարում Իր պատվիրանները:

Ահա այս պատճառով էլ Տեր Հիսուսն ասում է. *«Ցնծացե՛ք եւ ուրախացե՛ք, որովհետեւ ձեր վարձը շատ է երկնքում»*: Իսկ հետո հիշատակում է մարգարեներին:

**Ովքե՞ր էին մարգարեները:**

Մարգարեներն Աստծուց ընտրված մարդիկ էին, ովքեր կարողանում էին լսել Աստծո ձայնը, իմանալ Նրա պատգամները եւ դրանք հաղորդել մարդկանց: Նրանք զգուշացնում էին ժողովրդին, որ վատ գործեր չկատարեն, այլապես Աստված կարող է պատժել նրանց: Սակայն մարդիկ, ովքեր իրենց վատ գործերն ու վատ ցանկություններն ավելի շատ էին սիրում, քան Աստծուն, չէին կարողանում հանդուրժել մարգարեների զգուշացումները եւ հալածում էին նրանց, տանջում, պատժում, նույնիսկ սպանում, որպեսզի լռել տան: Օրինակ՝ նրանք, սղոցով կտրելով, սպանում են Եսայի մարգարեին:

**Արդարության համար հալածվողների օրինակներ**

Դանիել մարգարեն մանուկ տարիքում իր հայրենիքից գերի էր տարվել Բաբելոն: Նա իր երեք ընկերների՝ Սեդրաքի, Միսաքի, Աբեդնագովի հետ ապրում էր Նաբուքոդոնոսոր արքայի պալատում: Դանիելը հրեա էր եւ պաշտում էր ճշմարիտ Աստծուն, իսկ Նաբուքոդոնոսորը հեթանոս էր եւ կռապաշտ, այսինքն՝ պաշտում էր մարդկանց ձեռքով պատրաստված արձաններին՝ համարելով, թե այդ անշունչ քարե, մետաղյա կամ փայտյա արձանները աստված են: Մովսես հրեա մեծ մարգարեին տրված տասը պատվիրաններից մեկը պատվիրում է Աստծո փոխարեն չպաշտել կուռքերին եւ ոչ մի կուռքի չերկրպագել:

*Շարունակությունը՝ էջ 5*

# Մեծ Հայքի թագավորությունը Խոսրով Կոտակի գահակալության վերջին տարիներին



Ըստ Մովսես Խորենացու եւ Փավստոս Բուզանդի՝ Խոսրով թագավորի (նրան Կոտակ էին անվանում կարճահասակ լինելու պատճառով) օրոք նույնպես Հայոց թագավորությունում հերոսական եւ աշխարհաշեն գործեր են կատարվել:

Երբ Հայոց աշխարհը խաղաղվեց, Խոսրով III Կոտակը հրամայեց պարգեւներ տալ այն քաջ մարդկանց, որոնք դա վաստակեցին՝ պատերազմների ճակատամարտերում իրենց անձը դնելով Մեծ Հայք աշխարհի համար: Խոսրով թագավորը քաջագործությունների համար Վահան Ամատունուն պարգեւեց ճակատամարտի տեղը՝ Օշականը, Վաչե զորավարին տվեց Ձանջանակի ակունքները, Ջրաբաշխը եւ Ցլու գլուխը՝ բոլոր փոքր գավառներով, նույնպես եւ մեծամեծ պարգեւներ՝ մյուս նախարարներին: Իսկ Գուգարքի կողմերում Հայոց զորքի զորավար նշանակեց Խորխոռունիների նահապետ Գարջոյլ մաղխազին:

Խոսրով թագավորի եւ Ս. Գրիգոր Լուսավորչի որդի Վրթանես կաթողիկոսի օրոք, ըստ Փավստոս Բուզանդի, Հայաստանում *«աճեցին ու բազմացան խաղաղությունը եւ շենությունը, մարդաշատությունը եւ առողջությունը, պտղաբերությունը, առատությունը եւ գործի հաջողությունը եւ աստվածային մեծ պաշտամունքը եւ աստվածահաճո բարի վարքը: Սուրբ Վրթանեսը իր հոր եւ եղբոր* (Արիստակեսի) *նման ժողովրդին լուսավորում էր եւ առաջնորդում: Իրավունքն եւ արդարությունը ծաղկել էին այն դարում»* (Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, Երեւան, 1987, էջ 15):

Հայոց թագավորի հրամանով այս ժամանակ Այրարատյան աշխարհում անտառներ տնկեցին: Հայաստանի անտառաշատ տեղերից վայրի կաղնիներ էին բերում եւ տնկում Ազատ գետի կիրճում՝ սկսած Գառնի արքունի ամրոցից մինչեւ Մեծամորի դաշտում գտնվող Դվին կոչվող բլուրը, որն Արտաշատ մայրաքաղաքի հյուսիսային կողմում էր: Եվ այսպես կաղնու ծառեր տնկեցին Ազատ գետի ընթացքով մինչեւ Տիկնունի ապարանքը: Մի ուրիշ մայրի էլ տնկեցին դրա հարավային կողմում՝ եղեգնուտի եզերքով եւ ամբողջ դաշտը լցրին կաղնատունկ տնկով: Այս նորատունկ անտառներից մեկը կոչեցին Խոսրովակերտ, մյուսը՝ Տաճար մայրի: Երկու մայրիներն էլ պարիսպներով փակեցին, սակայն միմյանց չկցեցին, որպեսզի բանուկ մնա ճանապարհը: Մայրին աճեց ու բարձրացավ: Այնտեղ որսի համար ամեն տեսակ կենդանիներ եւ գազաններ լցրին:

Այս ժամանակ արքունիքն անտառից վերեւ փոխադրելու անհրաժեշտություն ծագեց: Դվինում՝ բլրի վրա, կառուցվեցին արքունի ապարանքներ: Արաքսի վտակ Մեծամորը փոխել էր հունը, եւ Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել: Ըստ Մովսես Խորենացու՝ արքունիքի փոխադրման անհրաժեշտությունը հետեւանք էր այն բանի, որ այդ ժամանակ Հրատ մոլորակը, այսինքն՝ Մարսը, ուղեկցում էր Արեգակին, եւ այդ վայրում ճահճուտների հետեւանքով առաջացած անմաքուր ջերմ օդը գարշելի հոտ էր արձակում: Ուստի Արտաշատում բնակվողները, այս բանին չդիմանալով, կամավոր հանձն առան տեղափոխությունը:

Այս խաղաղ եւ բարգավաճ ժամանակը երկար չտեւեց: 337 թվականին իր ավարտին էր մոտենում նաեւ Մծբինի պարսկա-հռոմեական խաղաղության քառասունամյա պայմանագրի ժամկետը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ այս ընթացքում Խոսրով Կոտակը Հեր ու Զարեւանդ գավառից լուր ստացավ, թե Սասանյանների զորքերը պատրաստվում են ներխուժել Հայաստան: Խոսրով թագավորը Բզնունյաց Դատաբեն նահապետին հրաման տվեց հայոց ընտիր գնդով դուրս գալ թշնամու դեմ, դիմադրել եւ ետ մղել: Հայոց գնդով Դատաբենը գնաց պարսից զորքի դեմ: Սակայն հասնելով թշնամուն՝ նա, անպատմելիորեն միաբանվելով պարսից մեծերին, որոշեց նրանց ձեռքը հանձնել Հայոց թագավորին: Նա թշնամուն խորհուրդ տվեց դարան սարքել իր զորքի դեմ եւ այդպես դավաճանաբար սրի մատնեց իր զինվորներին: Ինքը՝ չարագործ Դատաբենը, պարսից զորքի գլուխն անցած, կամեցավ Խոսրով թագավորի վրա հարձակվել: Հայոց գնդից կենդանի մնացածներն ավելի վաղ հասան Հայոց թագավորի բանակը եւ գուժեցին անօրեն Դատաբենի չարագործության մասին:

Խոսրով թագավորը Վրթանես եպիսկոպոսապետի հետ միասին ջերմեռանդ աղոթում էին Աստծուն՝ օգնություն խնդրելով: Շտապ իրենց մոտ հավաքելով թվով երեսուն հազար հայկական զորք՝ Վաչե սպարապետի եւ մեծամեծ նախարարների գլխավորությամբ ուղարկում են թշնամու դեմ: Հայոց եւ պարսից զորքերն իրար հանդիպեցին Վանա լճի ափամերձ Առեստ ավանում՝ դեմ հանդիման ճամբարներ խփելով Առեստ գետի ափերին: Թշնամու զորքերը թվով մի քանի անգամ ավելի էին եւ իրենց կազմում ունեին մեծ քանակությամբ փղեր: Չնայած դրան՝ հայերը խիզախորեն հարձակվեցին նրանց վրա եւ պարտության մատնեցին: Վաչե սպարապետը եւ քաջ Վահան Ամատունին ձերբակալեցին Դատաբենին եւ բերին Խոսրով թագավորի մոտ: Դատաբենին քարերով սպանեցին՝ իբրեւ մի մարդու, որը դավաճանել էր իր աշխարհին եւ իր տիրոջ գնդին ու զորքերին: Նրա տոհմը, կինը եւ որդիները գտնվում էին Ռշտունյաց իշխանի ամրոցում՝ Աղթամար կղզու վրա: Վաչե սպարապետը նավ նստեց եւ կղզի մտնելով՝ ողջ Բզնունյաց տոհմը ոչնչացրեց: Բզնունյաց տոհմական կալվածքն արքունիքի սեփականությունը հայտարարվեց (տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 32-35):

Մովսես Խորենացին այլ կերպ է ներկայացրել Բզնունյաց տոհմի ոչնչացումը. որպես դեռեւս Մանավազյան եւ Որդունի տոհմերի հետ տեղի ունեցած պայքարի արդյունք, երբ երեքն էլ ոչնչացան (տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1991, էջ 258):

Առեստավանի ճակատամարտում կրած պարտությունից հետո էլ պարսիկները չէին դադարում պատերազմել Հայոց աշխարհի դեմ, ուստի ամեն մի ներքին ընդվզում սասանում էր երկրի անվտանգությունը եւ պաշտպանությունը: Եվ Խոսրով թագավորը, որպեսզի կանխի նախարարների խռովությունները, օրենք սահմանեց, որով մեծամեծ ավագանին, աշխարհատեր նախարարները, որոնք բյուրավոր եւ հազարավոր զորքեր ունեին, պետք է մնային թագավորի մոտ, նրա հետ շրջեին, եւ նրանցից ոչ ոք չպետք է գնար արքունի զորքի հետ:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Գ ՇԻՆԱՐԱՐ ՏԱՅԵՑԻ

## (641-661)



*Սկիզբը՝ էջ 3*

Բյուզանդացիները նման էին այն մարդկանց, ովքեր ոչինչ չէին սովորել եւ ոչինչ չէին մոռացել: Փոխանակ այդ ծանր եւ զերլարված ժամանակներում նրանք ընդհանուր ճակատ կազմեին հայերի հետ՝ արաբների դեմ, կայսրը կրկին ձգտում էր հայերին պարտադրել հոգեւոր հաղորդությունը եւ Քաղկեդոնի որոշումները: Զգալով իրեն դրության տերը՝ կայսրը նույնիսկ չփորձեց բանակցել հայերի հետ եւ կարգադրեց կիրակիներից մեկի ժամանակ Դվնի Սբ. Գրիգոր կաթողիկեի մեջ պատարագը բյուզանդական ծեսով մատուցել՝ հոռոմ երեցների ձեռքով: Պատարագի ժամանակ միասին հաղորդվեցին Կոստանդին կայսրը, Մուշեղ սպարապետը, Ներսես հայրապետը եւ բոլոր եպիսկոպոսները. մի մասը՝ կամովի, իսկ մյուսը՝ ակամա: Այսուհանդերձ, եպիսկոպոսներից մեկը խուսափեց հաղորդվելուց, եւ կայսրը, իմանալով այդ մասին, նրան ատյան բերել տվեց եւ պատասխան ստանալով այն հարցին, թե նա Ներսեսին ճշմարիտ կաթողիկոս ճանաչում է թե ոչ, հարցրեց նաեւ, թե ինչու է նա խուսափել իր հետ հաղորդվելուց: Եպիսկոպոսը դիվանագիտական պատասխան տվեց, թե կայսրից պատկառել է, իսկ կաթողիկոսի համար հայտնեց, որ նա չորս տարի առաջ ժողով էր գումարել ու որոշում կայացրել Քաղկեդոնի ժողովը մերժելու մասին: Ավելին. եպիսկոպոսը, ցանկության դեպքում, պատրաստակամություն հայտնեց կայսրին ներկայացնել հիշյալ որոշումը: Իբրեւ թե դրա պատճառով Ներսես Գ-ն պապանձվեց, իսկ կայսրը նրան խորապես հանդիմանեց: Այնուամենայնիվ, եպիսկոպոսը կարգադրություն ստացավ գնալ ու հաղորդվել կաթողիկոսի հետ, իսկ եպիսկոպոսն էլ օրհնեց կայսրին ու փոխադարձաբար օրհնվեց նրա կողմից: Այս պատմությունը, որ հանգամանորեն մատուցում է Սեբեոսը, մի քանի մութ կետեր ունի: Ամենից առաջ հետաքրքիր է, որ պատմիչն այդպես էլ չի տալիս եպիսկոպոսի անունը, որը Մ. Օրմանյանին իրավունք է տալիս ենթադրելու, թե հաղորդությունից խուսափող եպիսկոպոսը եղել է հենց ինքը՝ Բագրատունյաց եպիսկոպոս Սեբեոսը: Բացատրության կարիք է զգում այն հանգամանքը, որ պատմիչը եպիսկոպոսի արարքը ոչ գովեստի է արժանացնում եւ ոչ էլ փնովում: Խորացնելով իր միտքը՝ Մ. Օրմանյանը հանգում է այն եզրակացության, որ Ներսես Գ-ն կայսեր հետ դավանական բանաձեւերի մեջ չէր մտել եւ դավանական հայտարարություն էլ չէր կատարել, իսկ հաղորդությունը Հայոց եկեղեցու կողմից չէր արգելվում, հետեւաբար այն իրողությունը, որ Սեբեոսը, մեծապես ամբաստանելով Ներսես Տայեցուն, բոլորովին չի մեղադրում Եզրին, մտածել է տալիս, թե նա Եզրի համախոհներից էր:

Կար մի հանգամանք եւս, որի մասին Սեբեոսը ոչինչ չի գրում: Խնդիրն այն է, որ Կոստանդին կայսրը եւ Պյուռոս պատրիարքը, ըստ ամենայնի, խստակրոն քաղկեդոնիկներ չէին, այլ համոզված միակամյաներ, որոնց թվին էր պատկանում նաեւ Հերակլ կայսրը: Ավելին. կայսրը միակամյաների մեծ ջատագովն էր: Հետեւաբար Ներսես Գ-ն իր վարքագծով ավելի մեծ զիջողության չէր գնում, քան, ասենք, Եզր հայրապետը: Ներսես Գ-ի վարքագիծը մինչ կայսեր արշավանքը որեւէ տարակույսների առիթ չէր տվել: 648 թ. ժողովական թղթով նա պաշտպանել էր հայ դավանանքը, իսկ կայսեր հետ հաղորդվելը Հայոց եկեղեցու կողմից արգելված չէր: Հույների հետ հաղորդություն ընդունելու վտանգը, որն իրենց գործողություններով խիստ առարկայական էին դարձնում հույները, այն էր, որ վերջիններս հաղորդվելուց հետո փորձում էին ուժով պարտադրել իրենց սովորությունները, ծեսերը եւ դավանանքը: Ներսեսը հազիվ թե չէր գիտակցում այդ վտանգը եւ իր գործունեությամբ ցույց էր տվել, որ նա Հայոց եկեղեցու դավանանքի ջատագովն է: Սակայն խնդիրը միայն դավանաբանական գունավորում չուներ, այն ավելի շատ քաղաքական էր: Հայ ժողովրդի առաջ խնդիր էր հարուցված՝ կողմնորոշվելու արաբա-բյուզանդական հակամարտության խորխորատներում, որի մասին այսօր դատելը հեշտ է, սակայն շատ դժվար էր ճիշտ լուծումը գտնել այն հեռավոր օրերին: Ներսես Գ-ն իր դատողականությամբ ու փորձառությամբ, իր եկեղեցական նկարագրով, քաղաքական ու կենցաղային պահվածքով ավելի շուտ հակված էր դեպի հույները եւ ոչ մի կերպ չէր կարող պատկերացնել արաբների գերիշխանությունը Հայաստանում: Նա արաբների Հայաստան թողնելուն կողմնակից չէր, սակայն ընտրության մեծ հնարավորություններ էլ չկային, ուստի նա նախապատվություն էր տալիս բյուզանդական տիրապետությանը: Երիցս իրավացի է Մ. Օրմանյանը, երբ գրում է, թե չի կարելի մեղադրել ո՛չ բյուզանդական եւ ո՛չ էլ արաբական կողմնորոշում ունեցողներին, քանի որ հայ հասարակությունն ինքը երկփեղկված էր այդ օրերին եւ փորձում էր ելք գտնել ստեղծված իրադրությունից: Հետեւաբար հազիվ թե կարելի է մեղադրել Հայոց կաթողիկոսին իր բռնած դիրքորոշման համար, որովհետեւ նրա կարծիքով՝ հայրենիքի փրկությունը հայ-բյուզանդական մերձեցման մեջ էր:

Հետագա զարգացումները ցույց տվեցին Հայոց կաթողիկոսի քաղաքական կողմնորոշման սխալականությունը: Կոստանդնուպոլսում խռովություններ եղան, հյուսիսային ցեղերը հարձակվեցին կայսրության կենտրոնական նահանգի վրա, որի հետեւանքով կայսրը ստիպված եղավ շտապով ետ վերադառնալ՝ զորքերի հրամանատարությունը հանձնելով Մորիանոսին՝ հունական եւ հայկական զորագնդերով: Արաբները փորձեցին բյուզանդացիներին դուրս մղել Հայաստանից, նրանց օգնում էր Թեոդորոս Ռշտունին՝ իր կողմնակից նախարարներով: Սակայն մինչեւ Նախճավան ու Դվին հասած արաբական զորքերին սառնամանիքները ստիպեցին ետ քաշվել, եւ Մորիանոս զորավարը որոշ հաջողություններ ունեցավ: 653 թվին պատերազմական գործողությունները ծավալվեցին նոր թափով, եւ արաբներն ու Թեոդորոս Ռշտունու զորամասերը բյուզանդացիներին քշեցին Հայաստանից: Դաշնակից զորքերը հասան եւ գրավեցին Տրապիզոնը, որի կառավարչությունը նույնպես Հայաստանի ու այսրկովկասյան երկրների հետ հանձնվեց Թեոդորոս Ռշտունուն: Այլեւս ելք չտեսնելով՝ Ներսես Գ Տայեցին ստիպված էր ժամանակավորապես թողնել քաղաքական ասպարեզը եւ հեռանալ Կոստանդնուպոլիս: Նա հույս ուներ ստանալու կայսեր աջակցությունն ու օգնությունը, սակայն հուսախաբ լինելով՝ վերադարձավ իր ծննդավայր Իշխան գյուղ եւ այնտեղ մնաց շուրջ վեց տարի:

*Շարունակելի*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

